



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

3776

619.2
4-76

Քիմիա

1878

1526

456

669

ԹԻՒՆՆԵՐԻ ԿԱՅԱՅԻՆՈՒ ՄԵԹՈՎԱՆՈՒԹՅԱՆ  
ԿՈՐԿԱՍԻՏ - ՆՈՒ ԳՐԱԶԳՐՈՅԻ ՔԵՆՈՒՄԲԱՆՈՒԹՅԱՆ  
ՄԱՍԻՒՆ 1878

**ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ**

Կոմկասի Բժշկական Վարչություն

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ИЗУЧЕНИЯ  
Азиатских Народов  
СССР



Թ Ի Յ Լ Ի Ս

Հ. Էնֆիաճեանց և ընկ. տպարանում:

1878

619.2  
4-76

42002

619.2

1526

4-76

БИБЛИОТЕКА  
ИСТОРИЯ  
РОССИИ  
Ленинградский Государственный Университет  
СССР

### ԿՈՎԿԱՍԻ ԵՒ ԱՆԴԻԿՈՎԿԱՍԻ ԲՆԱ- ԿԻՉՆԵՐԻՆ

ԳԻՒՂԱՑԻՔ

Ուժը յայտնի չէ, որ խնայողին Աստուած կը խնայի. բայց դուք այնպէս չէք վարվում, ոչ միայն դիւզացիներդ, այլ և քողարացիքդ անգամ, երբ ձեր անամնոց մէջ տարափոխիկ (դիւզողական) ցաւ է ընկնում, որպիսին որ տաւարի չուժան (սաքօնէլիսայ ճիրի. ազար) է:

Արդէն շատ ժամանակ է որ մեր Թագաւորը հրամայել է, որ Սրինաց-Գրքի (Չակօնի) մէջ բացատրեն և հասկացնեն ժողովրդեան, թէ ի՞նչպէս պէտք է նա պահպանի իւր անասունը՝ որ ցաւ չընկնի. մինչև անգամ այդ խրատները չ'ըսողները և օրէնքի այդ կանոնները չ'ատարողները համար պատիժ է նշանակել. բայց ջնայելով այս բոլորին, տաւարի այդ չուժան, այդ ազարը, ամէն տարի սաստիկ կոտորած է գցում անամնոց մէջ՝ այդ պատճառաւ էլ ոչ վար ու ցանք է լինում, ոչ հունձ է ժողովում և ոչ էլ թէ կասվում: Միով բանիւ, ոչ թէ խեղճ, այլ կարողութիւն ունեցող դիւզացին էլ աղքատանում է շատ անգամ, բայց ի հարկէ, այս նորանկց է հետևում, որ ժողովուրդը մէկ անգամ ղխումը մտցրել է, թէ անամնոց ցաւը Աստուած այն մէկ պատիժ է, որ ժողովրդեան մեղաց համար բարձրից զրկւում է, դորս

БИБЛИОТЕКА  
ИСТОРИЯ  
РОССИИ  
Ленинградский Государственный Университет  
СССР

Համար էլ, ամենքն էլ ձեռքերը ծալած ախ ու ոխ քաշելով նայում են թէ ինչպէս կոտորվում են իր անասունները: Ճշմարիտ է, տաւարի չուման, (աղարը) Աստուածային պատիժ է, բայց այդ բանը այնպէս չպէտք է հասկացած՝ ինչպէս ժողովուրդն է հասկանում: Ա՛յ, բանը ինչումն է: Ով որ անասուն ունի, բայց նորան վաւ է կերակրում, բացի դորանից, ստիպում է անասունին իւր ուժիցը դուրս աշխատիլ. ով իւր անասունով այնպիսի տեղեր է գնում որ տեղ այդ զիպչողական ցաւն է գունվում ի հարկէ որ, այն մարդը Աստուծոյ դէմ մեղանշում է, որովհետեւ, անասունը անպատճառ կ'հիւանդանայ և շատ կարնի է սատկի էլ: Այդ պատճառաւ է, որ Սուրբ Գրքի մէջն էլ ասւած է. «Եթէ անասուն ունիս, հոգ տար նորա վերայ, եթէ նա քեզ պէտք է, խնայի՛ր նորան»:

Ուրեմն, ինչպէս հոգ չտանել անասնի վրայ, որպէս մէկ անբան արարածի, որ ինքը իրան չէ կարողացել պաշտպանի զիպչողական հիւանդութիւնից:

Այս բանումը ժողովրդեան օգնելու համար, կառավարութիւնը Բժշկական մասի, քաղաքական բաժնի, կովկասի և անդրկովկասի, ըստ հրամանի Նորին կայսերական Բարձրութեան, Մեծ իշխան ՄԻԲԱՅԷԼ ՆԻԿՈՒԱՆՎԻԶԻ ի վերայ հիման Օրինաց, (Չախօնի) կազմեց այս կանոնները ժողովրդեան համար, որոնց նա պիտի կատարի, որ իւր անասունը չումայի ցաւ չ'ընկնի, և եթէ Աստուած մի արասցէ այդ հիւանդութիւնը անասնի վրայ երեւայ, իսկոյն իմանայ շուտով նորան բնաջինջ անելու կերպը: 50182-աի

Այս կանոնների վրայ չ'պէտք է նայիլ որպէս կառավարութեան ցանկութեան, և նոր ներդրութիւն պատճառել ժողովրդեան, որոնց անասունը էլ անասնոց այդ



36188-66

կոտորւածքի ժամանակը շատ է տանջվում: Կառավարութիւնը շատ լաւ է իմանում, որ երբեմն այնպէս է պատահում, որ մարդ այն չէ կարողանում անել, ինչ որ նա ուզում էր անի:

Շատերին յայտնի է, որ Նէմէցստանում, (գերմանիայում) Գրանտիայում, Իտալիայում և Անգլիայում, սորանից շատ և շատ տարիներ առաջ՝ երբ ոչ բժիշկները և ոչ ժողովուրդը չ'զիտէին թէ ինչն է առաջանում անասնոց աղարը, և չզիտէին թէ ինչպէս պէտք է բնաջինջ անեն, այդ ժամանակներում անասունը հիւանդանում և սատկում էր էնպէս, ինչպէս հիմայ մեզանումն է պատահում: Բայց երբ բժիշկները սկսան քննել այդ ցաւը, երբ իմացան թէ՛ ինչն է հետևում այդ կոտորուածքը, երբ տէրութիւնները օրէնքներ և կանոններ հրատարակեցին ժողովրդեան համար անասնոց այդ չումայի դէմը առնելու և նորան քոքիցը կտրելու համար, եթէ նա երեւար՝ Նրբ ժողովուրդը սկսեց ճիշդ և օրինաւոր կերպիւ կատարիլ այդ կանոնները, այն ժամանակ դրսի երկիրներում, (արտասահմանում) տաւարի աղարը շատ հազիւ էր պատահում, որը իսկոյն ոչնչանում և կորվում էր: Այդպէս էլ մեր թագաւորը, իմանալով որ այդ չումայի դէմ մէկ հաստատ զեղ չ'կայ և այդ հիւանդութիւնը փոփոխական է և ժողովուրդը իւր անասունին չումա դիպչելուց չի պահպանում, Օրէնքի մէջ ժողովրդեան համար կանոններ դրեց, որոնց նա պէտք է կատարի այդ զիպչողական ցաւից իր անասունը ազատելու և նորան բժշկելու համար: Այդ օրէնքները բացատրուած են XIII հատ. Օր. Գրքի. 1857 թուի հրատ. Բժշկա-Պօլիցիական կանոնագրում. Միջոցներ, որոնց պէտք է գործ ածել անասնոց աղարի դէմը առնելու համար,

սխաճ 1714. յօդ. մինչև 1734-դ յօդուածները: Բայց զորանց, Գատական - Կանոնադրում գրված են, թէ ինչ միջոցներ պէտք է գործ դնեն և ինչ պատիժ պիտի կրեն նորքա, որոնք այդ կանոնները չեն կատարում: Ահա, այս պատճառաւ էլ, այս ներկայ կանոնները ամէն մարդ, ով որ բնակվում է Ռուսաց տէրութեան մէջ՝ պարտաւոր է կատարել ճշտութեամբ, ապա թէ ոչ, յանցաւորը, նայելով իւր յանցանքի չափին, կենթարկվի կամ քրամական աւագանքի, օրինաց հիման վերայ, և կամ մինչև անգամ կը բանտարկվի էլ:

**ԽՐԱՏ**

Գիւղացի բնակիչներին, անասնոց ցաւի (չումայի) առաջը առնելու համար, որ վրացիք ստում են ասարօնելիսա ձիրի, իսկ հայերը ևւ տանիկները ազար:

Տաւարի չուման (ազար) հիւանդ անասունից առողջին շատ շուտով է անցնում: Այս այն է նշանակում, որ այս հիւանդութիւնը փոփոխական ցաւ է, տարափոխիկ է, և շուտով տարածվում է ոչ միայն գիւղի անասնոց մէջ, այլ և ուրիշ գիւղեր էլ է անցնում: Եւ ցաւի դէմ հաստատ դեղ չկայ, այդ պատճառաւ էլ հիւանդացող անասունների մեծ մասը կոտորվում է. սորա համար էլ ոչ միայն անասնի տէրը առանձին, այլ ամբողջ գիւղացի հասարակութիւնը պէտք է բոլոր միջոցներով հոգայ, որ ժանտախտը իրանց անասունների մէջ չտարածուի, իսկ եթէ երևեցաւ այդ հիւանդութիւնը, սիրով և եռանդով աշխատեն ոչնչացնել նորան: Այդ նպատակին հասնելու համար, թէ ամէն մարդ ինչ կոչումի և աստիճանի տէր էլ որ լինէր, միայն թէ կով և եզներ

ունեցող անձը լինէր, և թէ քաղաքային և գիւղային հասարակութիւնք, պարտաւոր են, ճշտութեամբ կատարել այն կանոնները, որոնք այժմ նորա համար բացատրվում են և մեկնվում:

Անասնոց չումայի նշանները:

Եթէ չես լսմանում, որ քո գիւղում և կամ մերձակայքում չումայի ցաւ կայ, էն ժամանակը ամենալաւ անասնապահ տիրոջ համար անգամ շատ դժուար է նկատել այդ ցաւի առաջին նշանները հիւանդացող տաւարի վրայ: Ընդհանրապէս, անասնի տէրը և մինչև անգամ հովիւը, միայն էն անասունին են հիւանդ համարում, որ էլ ոչինչ չէ ուտում: Անասունը պարզապէս հիւանդ է (եթէ նայեն և քննեն) և արդէն երեք, չորս, մինչև անգամ հինգ օր է, որ շարունակում է ուտել. այդ պատճառաւ էլ պատահում է որ անասունը առաւօտեան ուտում է՝ տէրը համարում է նորան առողջ և թողնում է նորան խաչի հետ արածելու երթալ, իսկ զիշերը էդ մի և նոյն անասունը՝ հազիւ թէ կենդանի, կիսամեռ յետ է դառնում և մէկ կամ երկու օրից յետոյ սատկում, բայց արդէն շատ փորձերով հաստատած է, որ որչափ շուտ նկատես հիւանդութիւնը, որչափ շուտ հնարներ գործ դնես նորան ազատելու, այնչափ աւելի յոյս կլինի առողջացնելու, բայց որ ամենազիւաւորն է, միւս անասնոց էդ ցաւը զիւզելու և փոխվելու վտանդի առաջը կառնես, եթէ հիւանդացած կովը կամ եզը, հէնց սկզբից, երբ հիւանդութեան նշանը նկատեցիր, կը հեռացնես առողջներից: Այդ պատճառաւ էլ, ամէն անասնատէր և ամէն հովիւ պէտք է լաւ նայեն անասունին, թէ տանը և թէ հօտի մէջ այն ժամանակ երբ իրանց գիւղում և կամ

մերձակայքում տաւարի ցաւ է լինում և ինչքան կարելի է հիւանդացած անասունին շուտ պէտք է բաժանեն նախրից:

Ահա, թէ ի՞նչպէս է նկատվում չուման անասնի վրայ. հիւանդացած անասունը մէկ քիչ թոյլ, դանդաղ և ծանրաշարժ է դառնում, ման է գալի չուզելու կերպով, և նախրից միշտ յետ է մնում: Այդ ման գալու միջոցին անասնի ոտերի պճեղների մէջ ճեղքեր է նկատվում: Այդ դրութեամբ անասունը սովորաբար լաւ ուտում է և լաւ էլ աշխատում. բայց մորթելու կովերի և մատակ գունդների կաթը յանկարծ սկսում է քանալ: Այդպէս անց է կենում աննկատելի կերպիւ մէկ երկու օր, բայց եթէ էդ ժամանակին լաւ նայիլ, նա հետզհետէ տխուր է դառնում, կաշվի վրայի մազը փայլելուց դադարում է, ախանջները քաշ է գցում, աչքերը չօր և փայլուն են դառնում, բերանում տաքութիւն է լինում և ընտերքի և լեզուի վրայ բշտիկներ են երևում. աղբը այդ միջոցին լինում է պինդ և ձմիած, դուրս է գալի հազիւ և քիչ քիչ, իսկ մէզը, ընդհակառակը դուրս է գալի ստէպ և շատ—շատ: Այդ տեսակ անասունը թէպէտ ուտում է, բայց քիչ, և միայն գլուտում է որոճելուս: Եթէ այդ ժամանակին լաւ նայիլ, կը նկատվի, որ որոճի գլուտումը հետզհետէ պակասում է: Յանկարծ, որոճը կորչում է, անասունը այլ ևս չէ ուտում, այլ միայն ազահութեամբ ջուր է խմում: Այդ միջոցին, աչքերում երևում են արտասուք. քթածակից սկսվում է խլինք գալ, իսկ բերանից թելի պէս ձգուած խեղձ թափիլ: Այդ դրութեան մէջ անասունը կամ ամենևին չէ թրքում, կամ յանկարծ լուծմունք է երևում, երբեմն մինչև անգամ արիւնախառն և սպիտակ կտորներով: Ահա այդ միջոցից

սկսած, անասունն ըստ մեծի մասին պառկած ծանր շնում է, ատամները կրճտում և անդադար երբեմն փորի մէկ կողմը, երբեմն էլ միւս կողմը նայում: Պատահում է որ այդ դրութեամբ նա անց է կացնում մի քանի օր, իսկ երբեմն էլ մէկ օրից սատկում, հանդարտ, առանց ցնցմունքների, ըստ մեծի մասին գլուխը ձախ կողքը մտցրած:

Եթէ կտրտեն և նային չումայից սատկած անասնի ներսը, այ, ինչ կը տեսնեն էն տեղ: Չորրորդ փորում, այն տեղում որ տեղից սկսվում են աղիքները, աղբը հոտած կարմրագոյն և ջրալի կլինի, որի մէջ լողալիս կլինին սպիտակ կտորներով: Այդ փորի կողքերը կ'ունենան մուգ-կարմիր գոյն, բազմաթիւ մանր վերքերով, որոց մէջ տեղը երևում է սպիտակ բծեր: Այդ ստամոքսից դէպի աղիքը գնացող տեղը սուսած կը լինի: Աղիքը, որ սկսվում է և գալիս է չորրորդ փորից, ինչպէս որ նոյն ինքը փորն էլ, մէջ տեղում խոց կ'ունենան: Կոր տուած աղիքը, այսօր ինքն նա, որ տուարակի նմանութիւն ունի, մէջ տեղում ծածկուած կը լինի մոխրագոյն փշակներով, իսկ այն աղիքը, որի միջից որ աղբը դուրս է գալի (այդ աղիքին բժիշկները ուղիղ աղիք են ասում) աղիքի երկարութեան հետ կարմրագոյն խաղեր ունի: Լեարդը սովորականից դուրս մեծ և լեղու պարկն էլ լեղիով լեքը կլինի: Ամէն ժամանակ չուման ընկած տաւարի ընտերքի, լեզվի յետի կողմի և բերանի վրա երևում են խոցեր, որոնք ծածկուած են սպիտակ փառով որ նմանում է մաճունին:

Երբոր հիւանդ կամ սատկած անասնի վրայ գտնվեն այն ամէն բաները, ինչ որ հիմայ ասվեցաւ, այդ կը նշանակի որ նա տաւարի չումայ կամ ազար ասուած ցաւով հիւանդ է եղել, և ամէն անասնատէր անպատճառ պէտք է կատարի հետեւեալ նախազգուշութիւնները:

Ինչ բանից պէտք է զգոյշ կենալ, որ իւր անասունը չուսն չընկնի:

1. Ամէն անասնատէր պէտք է խմանայ թէ մերձակայ հարեանութեան մէջ որտեղ է գտնվում անասնի հիւանդութիւնը, և այդ դէպքում, ամէն աշխատանք պէտք է գործ դնել, ոչ միայն իր անասնով այն կողմերը չերթալ, այլ այն տեղին անասուններին էլ չ'ընդնել իրանց գիւղը գալ: Բնակիչներին այս պարտաւորութիւնը ճշգրտութեամբ կատարելուն սաստիկ վերահայեցողութիւն պէտք է անեն գիւղի այսպէս ասվուած քեօսովէքը կամ տանուտէրները: (1714 յօդ. XIII հատ. Բժշկա-Պօլիցիական կանոնադրութիւն):

2. Երբ որ մէկը սաստիկ կարևոր գործի պատճառաւ ստիպված է այնպիսի տեղեր անցնել, որտեղ անասնի ցաւ կայ, էդ տեղերում երբէք չ'պէտք է կանգնի ոչ արածացնելու, ոչ ջուր խմեցնելու և ոչ մէկ հարկաւոր գործի համար, այլ անցնել որչափ կարելի է շուտ: (1724 յօդ. մի և նոյն հատորի և կանոնագրի):

3. Իջևանների և դուքանների առաջ չ'կանգնել, եթէ նորա մօտ կանգնել է կամ կանգնած են եղել հիւանդ անասուններով սայլեր:

4. Հիւանդութիւն եղած ժամանակ իր անասունը ուրիշ գիւղ չ'ուղարկել հող վարելու և կամ մէկ ուրիշ աշխատանքի համար, և ինքն էլ այնպէս չ'պէտք է ուրիշ գիւղերից վերցնի, որտեղ հիւանդութիւն կայ:

5. Չ'առնել անասուն այնպիսի տեղերից որտեղ, նորանք հիւանդանում են: Եթէ բան է, տեսքով առողջ անասուն են առել, բայց այնպիսի անյայտ տեղից, որպիսին որ զոր օրինակ քաղաքն է, այդ ժամանակ հարկաւոր չէ իսկոյն թողնել իւր անասունների մէջ, կամ

հասարակաց նախրում: Երբ որ նրան գիւղը կը բերես, մի երկու շաբաթ նրան առանձին տեղ կապիր, որովհետև անասնոց չուսնայի ցաւը կարող է երկու շաբաթ անյայտ մնալ և նշաններ չցոյց տալ. (1724 յօդ. մի և նոյն հատորի և կանոնագրի):

6. Չ'առնել ոչ կաշի, ոչ միս, ոչ բուրդ, և մինչև անգամ ոչ մի անասնի ուտելիքն այն տեղերից, ուր այդ հիւանդութիւնը գտնվում է:

7. Թողնել նոյն գիւղի դուքանի տիրոջ առնել ոչ միայն այնպիսի անասուն, որոնց համար գիտեն որ հիւանդ է, այլ մինչև անգամ, չ'ընդնել նորան անասուններ առնել էնպիսի տեղերից, որտեղ գտնվում է էդ ցաւը: (մի և նոյն յօդ.)

8. Ոչ մէկ ժամանակ չ'ընդնել դուքանի տէրերին անասուն մորթել կամ կաշի չորցնել փողոցում, կամ այնպիսի տեղերում, որ տեղից բազմութեամբ անցնում են եզներ, կովեր, ոչխարներ կամ այծեր:

9. Եթէ պատահի, որ զինուորական և կամ ուրիշ բեռներ բերեն, էն ժամանակ բեռը դարդակելու միջոցին իւր անասունը պէտք է այն տեղից հեռու պահեն, որ տեղ որ բեռը բերող անասուններն են գտնվում: Այս կանոնին սաստիկ պէտք է հետևեն, նա մանաւանդ այն ժամանակ երբ բեռը բերել են, կամ փոքր ինչ առաջ անց են կացրել այն տեղերից, որտեղ հիւանդանում են անասունները:

Բայց եթէ որ Աստուած մի' արասցէ, գիւղը չըկարողացաւ ազատվել և անասնի չուսն երևեցաւ նրա մէջ՝ այն ժամանակ ամէն գիւղացի բնակիչ պէտք է ամենաճիշդ կերպիւ կատարի հետևեալ միջոցները, որպէս զի,



որչափ որ կարելի է, հիւանդութիւնը գիւղի միջից շուտ բնաջինջ անեն և շուտ բոքից կարեն: Եւ այսպէս պէտք է բնաջինջ անն տաւարի չունան գիւղերում կամ անդաստաններում

1. Ամէն մարդ՝ ով էլ որ լինէր նա, որ բնակվում է գիւղում, մինչև անգամ նոյն իսկ գիւղատէրը, երբ իւր անասնոց մէջ երեւի տարախոխիկ ցաւը, պարտաւոր է իսկոյն և իսկ յայտնել գիւղի քեօխվին, որը նոյն օրը այդ բանի մասին պէտք է յայտնի կամ պոլիցիական պրիտաւ վին, կամ Ուէզզինի նաշալնիկին: Եւ միջոցին, մինչև բժշկի գալը, ամէն մէկը պարտաւոր է ճշգումթեամբ կատարել այն ամէնը, ինչ որ ցոյց է տուած այս կանոններում: Չկատարողները կ'ենթարկվին օրէնքի խիստ դատապարտութեան, այսինքն, տուգանք կը վճարեն և մինչև անգամ կը բանտարկվին:

2. Երբ որ անասնի չունան երեւի գիւղում կամ հանդերում, պէտք է ամբողջ գիւղի հասարակութիւնը միասին և ոչ թէ առանձին առանձին զործի: Այդ բոլոր միջոցում պէտք է մէկ մէկու վրայ հսկեն և օգնեն միմեանց: Ամէն մէկ գիւղացին միւսից պէտք է պահանջի, որ նա ճշգումթեամբ կատարի այն ամէնը, ինչ որ ասուած է այս կանոնների մէջ. իսկ այն անասնատէրերը որոնք անգոր են կատարել, զոր օրինակ, սատկած անասունը գիւղից դուրս տանել և թաղել, այդ ժամանակ գիւղացիք իրանք պէտք է օգնեն նրան: Էս բանը պէտք է անեն նրա համար, որ եթէ գիւղացի բնակիչներից մէկը չէ կատարում այս կանոնները, էն ժամանակ գիւղի միւս բնակիչների կրած հոգսերը և աշխատանքը ի դուրս են անցնում:

3. Գիւղացի բնակիչներին այս կանոնների կատարման հսկողութեանը համար և նոյնպէս գիւղի անասնոց վերահայեցողութեան տակ ունենալու համար, պէտք է որ գիւղացիք իրանց միջից մէկ օրինաւոր և այդ բանի համար յարմար մարդ ընտրեն, որի վրայ որ յոյս ունին թէ այդ բանի մէջ ընդունակ է, որին կ'անուանեն չոււմայի քեօխվայ:

4. Հիւանդ անասուններին տեղաւորելու համար պէտք է գիւղիցը դուրս, կամ գիւղի վերջում մէկ անանձին տեղ ընտրել, որ գիւղի հիւանդ անասունները էստեղ քշվին: Եւ հիւանդ անասուններին նայելու և խնամելու համար առանձին մարդ պէտք է բռնեն կամ վարձեն, որը գիւղի առողջ անասուններին չպիտի մօտենայ:

5. Հիւանդ անասունը նախից պէտք է բաժանել ոչ թէ այն ժամանակը, երբ նա դաւ սրում է ուտել, այլ այն միջոցին, երբ նա սկսում է տխրել և թուլացած քայլերով ման գալ:

6. Մինչև որ գիւղացիք հիւանդ անասունների համար բնակարան կը շինեն, ամէն անասնատէր իւր անասունը պէտք է իւր բակումը պահի, բայց այնպէս, որ էդ միջոցին նա բակի մէջ և կամ գիւղում չ'մանդայ և ուրիշ անասուններից հեռու լինի կապած: Տանրցիներից մէկը պէտք է նայի հիւանդ անասունին և այդ միջոցներում միւս առողջ անասնոց չպիտի մօտենայ. (1724 յօդ. XIII հատ. Բժշկա—պօլից. Կանոնագ.)

7. Հիւանդ անասնի ազրը առողջ անասնոց ազրի հետ չ'խառնել, այլ ամէն օր սրել և այրել:

8. Հիւանդ անասնոց համար զործ ածած ամանը

կամ ուրիշ իրեղէնք, առողջների համար չ'գործածել: (Նոյն օրինաց կանոն.)

9. Որտեղ որ գիւղի անասունները ջուր են խմում, էն տեղից ջուր չ'խմացնել տալ հիւանդներին, այլ տանը, մէկ առանձին ամանով: (Նոյն օր. կանոն.)

10. Սատկած անասունը իւր կաշվով գիւղից դուրս տանել, որտեղ որ գիւղի քէօխվէն իր ցոյց տայ, հողի մէջ խորը թաղել և կամ այրել: Աթէ սատկած անասունը իր կաշվով թաղեն, էն ժամանակ կաշին զանազան տեղերից կտրատեն, փչացնեն, որ գիշերը ոչ ոք չ'քերթի: (Նոյն օր, գիրք.)

11. Սաստիկ արգելվում է սատկած անասունը թաղել զոմանոցներում (աղաներում), գիւղի մէջ տեղում աղբի մօտ, կամ ճանապարհին մօտիկ պարտէզներում, կամ ջրանցքների, կամ աղբիւրների և գետերի դաշտերում թէ պէտ նրանցում ջուր էլ չլինէր:

12. Սատկած անասունը գիւղիցը դուրս տանելու ժամանակ եզով և գոմշով չ'քաշել, որ արգելվում է, այլ ձիով և կամ մարդկերանցով: (Նոյն օր. կանոն.)

13. Թուփերը, սայլը, կամ ուրիշ իրեղէնք, որոնցով որ սատկած անասունը տարան և թաղեցին, պէտք է կամ կրով սպիտակացնել, կամ տաք մոխրաջրով լուանալ: (Նոյն օր. կանոն.)

14. Այն մարդիկ որոնք լէշը տարել են, առողջ անասուններին չ'պէտք է մօտենան, մինչեւ էն ժամանակը, որ սապոնով ձեռքերը լաւ լուանան և շորերն էլ փոխեն, որոնց յետոյ պէտք է կամ լուան կամ լաւ քամու տան (Թափ տան): (Նոյն. օր. կան.)

15. Սատկած անասնի միսը շներին չ'տալ:

16. Գոմերը որոնց մէջ հիւանդ անասուն է նշել,

պէտք է աղբը լաւ իստակել և կրով սպիտակացնել: Գոմերի գետինը պէտք է կրաջրով լուանան. դռները ամբողջ ամիս բաց թողնեն և միայն էդ ժամանակը կարելի է առանց երկիւղի անասունները ներս քշել, որ տեղ էլ ցաւ չի գիպչի:

17. Մարդոց համար հիւանդ անասուն չ'մորթել:

18. Միւս գիւղերի վրայ անասուն չ'ծախել, մինչեւ որ ցաւը չ'անցնի և նոյնպէս լաւ կը լինի, որ հիւանդութիւն եղած ժամանակը ուրիշ գիւղերից էլ անասուն չ'առնվի:

19. Սաստիկ վերահայեցողութիւն ունենալ. դուքանի տէրերի վրայ, որ նրանք հիւանդ անասուն չ'առնեն, չ'մորթեն և կաշին չ'հաննեն:

Այն գիւղացի հասարակութիւնք, որոնց մէջ բոլոր բնակիչները սիրով և ճշգրութեամբ կը կատարեն այն ամէնը, ինչ որ ասվեցաւ այս կանոնների մէջ, Աստուած նրանց անշուշտ կ'օգնի, շուտով ազատելու իրանց անասունները չուճայի հիւանդութիւնից:

Ինչպէս պէտք է բժշկել անասունների չուման:

Թէպէտ և մինչև ներկայ ժամանակներս բժիշկները (գրաստարութները) դեռ չեն դատել իսկական դեղը անասնոց չումայի դէմ, բայց այնու ամենայնիւ, դոնէ մի քիչ կարելի է օգնել հիւանդ անասունին: Ահա թէ ինչպէս պէտք է վարվեն հիւանդ անասնի հետ:

1. Հէնց որ անասնատէրը կամ հոգիւր կը նկատեն որ անասունը սկսեց տկարանալ (սկսում է տխրիլ և ձանձրանալ) թէպէտ և ուտում է, իսկոյն հեռացնել նորան նախրից, առանձին տեղ պահել, այնպիսի տեղ որ արև չ'գիպչի, անձրևից չ'թրջվի և սաստիկ քամի չ'ենթարկվի:

էջ տեսակ անասունին չ'տալ ոչ դորման, ոչ խոտ և ոչ մինչև անգամ կանանչ խոտ. այլ տալ նորան միայն խմելիք կամ հունի ջուր, կամ շորի ջուր, կամ թթու խնձորի և կամ թեփաջուր:

2. Սկզբից, երբ հիւանդ անասունի աղբը պինդ է, տալ նորան խմելու շեշեց (բուժիչից) մէկ գրվանքայ որևէ ձէթ, որ դառը չ'լինի, տաք ջրի հետ խառը: Եթէ միւս օրը աղբը չի փափկանայ, մի և նոյն ձէթից մի գլուխ վանքայ էլ տալ: Հիւանդ փոքրիկ հորթերին՝ միայն քառորդ (չէթ վերթ) գրվանքայ ձէթ տալ, իսկ մէկ տարեկաններին կէս գրվանքայ:

3. Երբ հիւանդ անասունները սկսում են լուծել, էն ժամանակ տալ նորան խմելու գարիի կամ բրնձի խաշու (отворъ). հորթերին տալ մէկ—մէկ բուժիչից խաշու առաւօտուն, ճաշին և երեկոյեան: Մի տարեկան անասուններին տալ երկու երկու շեշ խաշու, առաւօտ, ճաշ և երեկունը: Իսկ մեծ հասակաւոր անասուններին, առաւօտ, ճաշ և երեկուն տալ երեք երեք, մինչև անգամ չորս չորս շեշ (բուժիչի) խաշու: Եթէ տանը կ'գտնվի կարբօլօփաեա-կիսլատա ասուած դեղը (карболовая кислота), էն ժամանակը ամէն մէկ շեշ խաշուի մէջ կաթացնել 15 կաթ այդ կարբօլօփաեա կիսլատա դեղից, և երբ դրանց խաշուի շեշերի մէջ կաթացնվի, առաջ պէտք է մէկ լաւ խառնվի և յետոյ տալ անասունին խմելու:

Գարիի խաշուն, պէտք է պատրաստել այսպէս: Վերցնել 3 գրվանքայ մաքուր գարի, փոքր ինչ նորան ծեծել, յետոյ խտակ կաթսայի (պղնձի) մէջ անել, և երեք թունդի մաքուր ջուր լցնել նորանում, յետոյ կաթսայի բերանը ծածկել և եփել նրան մինչև այն ժամանակը, որ

ջուրը սկսի լարծանալ (թանձրանալ.) այդ միջոցին կրակի վրայից վերցնել և թողնել նրան որ հովանայ, յետոյ խաշուն քամել խտակ շորով կամ մաղով: Խաշուն պէտք է պահել հով տեղում որ չ'թթվի: Թթված խաշուն չ'տալ երբէք անասունին:

4. Լաւ կը լինի, եթէ հիւանդ անասունին մաքուր ջրից և կամ գարիի խաշուից գրեխ (հօխնայ) տան, կարբօլօփօ-կիսլատա հետը խառը: Այդ բանը անելու համար, երեք թունդի խտակ ջրի կամ գարիի խաշուի հետ չորս թէյի (չայի) գլալ կարբօլօփօ-կիսլատա խառնել: (Այդ խառնած կարբօլօփօ-կիսլատան, պէտք է լաւ հարել ջրի կամ գարիի խաշուի հետ): Գրեխը, այսինքն հօխնան, օրը երեք անգամ պէտք է անել, առաւօտեան, ճաշին և երեկոյեան: Հօխնայ կ'տան հետևեալ կերպիւ: Եթէ որ տանը հօխնայի գործիք չ'կայ, էն ժամանակ պէտք է գտնել ելի չոր բուշտի (փամփուշտ, փուշիկ) և վերցնել մեծ մատի հաստութեամբ մէկ ելիզնափայտ (ղամիշ) կամ մէկ ծխափայտ, (չուբուխի կոթ,) որը բուժ մատի երկու քառորդ երկարութիւնը ունենայ: Ղամիշի կամ ծխափայտի երկու ծայրերը ուղիղ կտրել և երբ ամէն բան պատրաստ կը լինի, էն ժամանակ բուշտու մէջ լցնել պատրաստուած ջուրը կամ խաշուն կարբօլօփօ-կիսլատով, յետոյ բուշտու (փամփուշտի) մէջը մտցնել զամիշի կամ ծխափայտի մէկ ծայրը և բուշտու բերանը ամուր կապել, յետոյ ազատ ծայրը կամաց կերպիւ դնել ետեղում, մինչև որ բուշտուն հասնի, և էդ միջոցին երկու ձեռքով բուշտուն սխմել, մինչև բոլոր դեղի թափվիլը: Երբ որ գրեխը (հօխնան) դնում են, մէկը պէտք է անասնի պոչը վեր քաշել:

5. Երբ անասունը կը կազդուրվի, և կսկսի ուտել, էն



ժամանակը տալ նրան ամենալաւ խոտ, բայց թիչ, որ  
պէս զի չ'փնասի և նորից չ'հիւանդանայ:

6. Առողջացող անասունը կամ առանձին արածի,  
և կամ նախրի մէջ թողնեն, բայց առողջանալուց երկու  
շաբաթ անց կացած պէտք է լինի:

7. Հիւանդ անասունին արիւն չ'թողնել և պլպելը  
ու արող չ'տալ նրան:

Իսկականը ստորագրեց բժշկական մասի, Քաղաքա-  
կան բաժնի կառավարչի պաշտօնը ժամանակաւորապէս  
կառավարող Կովկասում և անդր Կովկասում անփոփոխ  
անդամ, Ստատսկի սօվէտնիկ Վ. Էրլին:

Իսկականի հետ ճիշդ է

Գործակառարի փոխարէն Ա. ԱՍԷՆՉ



2013



218

44.1

ИНСТИТУТ  
Академии Наук  
СССР

ԲԱԺԱՆՎՈՒՄ Է ՁՐԻ:



710

218

